



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿԱՌԻԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով

Միտքի բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս և ի սփյուռս,

Տարեմուտի այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու բարեմայությանը ենք բերում ամենաբարձր: Ամանորը սահմանագիծն է պատմությունը դարձած օրերի և հուսառատ գալիքի:

Փրկչական 2024 թվականը դիմավորում ենք խոր մտահոգություններով, դիմավորում ենք ահռելի կորուստների անամոքելի ցավը մեր սրտում: Ծանր տարի ապրեցինք, սակայն Տիրոջ ապավինած՝ հույսով ու լավատեսությամբ ենք նայում մեր ազգի ապագային: Արցախի բռնազավթման և հայաթափման, Հայաստանի շուրջ ստեղծված լրջագույն իրավիճակով և առկա հիմնախնդիրներով հանդերձ՝ հաստատական պիտի հաղթահարենք դժվարությունները՝ ամուր պահելով նվիրումն ու սերը առ հայրենին և հավատը առ մեր Ամենակալ Տերը:

Միտքիներ, ուրախության թե նեղության պահերին մեր ժողովուրդը միշտ ապավինել է Աստծուն, միշտ ուժ ու գործունեություն առել Բարձրալից՝ հավատքով, որ Աստված մեզ հետ է: Անտարակույս, մեր ժողովրդի հոգևոր ներուժն ու ոգու ամրությունը մեզ պիտի առաջնորդեն վերհառնումի և հայոց կյանքի հաղթական վերընձյուղման: Մենք ժառանգներն ենք



մի ազգի, որ տառապել ու չարարվել է, բայց չի հանձնվել, ցեղասպանվել է, բայց չի կործանվել, սրտով է, բայց չի մահացել: Արդարև, չի կարող ընդհատվել պատմությունը մի ժողովրդի, որի տարեգրությունը գարդարված է աստվածաշնորհության և հայրենասիրության հրաշալի վկայություններով, ապրելու և արարելու անընդմիջելի տենչանքով: Փորձությունները հաճախ են պատահում ժողովուրդների կյանքում, սակայն դժվարին իրավիճակներից հաղթանակված են դուրս գալիս այն ազգերը, որոնք անկույտ են մնում ոգով ու առ Աստված հավատքով և արիաբար դի-

մակայում նեղություններին ու մարտահրավերներին: «Տերը ապավենն է բոլոր նրանց, ովքեր հույսը դրել են Նրա վրա», — ասում է սաղմոսագրություն (17.31):

Արդ, սիրելիներ, նոր տարում նորոգվենք հոգով ու մտքով, գործնական հույսով, ինքնաբերական անդրադառնալով մեր ընթացքին ու գործերին, սրբագրենք թերացումներն ու սայթաքումները, թույլ չտանք, որ ազգային կյանքում սերմանվի ատելություն ու պառակտում, արմատավորվի կործանարար հարմարվողականությունն ու անտարբերությունը: Ապրենք հավատքով գարդարուն կյանքով, միմյանց հանդեպ աստվածապատվեր սիրով, որպեսզի զգանք Աստծո շնորհաբեր ներկայությունը մեզանում: «Մեր անձերը կառուցենք հավատի սրբությամբ, աղոթենք Սուրբ Հոգով, պահենք մենք մեզ Աստծու սիրով», — ինչպես հորդորում է առաքյալը (Հուդա 20—21): Միասնական լինենք Հայաստանում ու սփյուռքում և մեր համախումբ ջանքերը ծառայեցնենք հանուն համագալիս շահերի պաշտպանության, հայրենյաց ու ազգի կյանքի նոր արշալույսի կերտման: Գիտակցենք, որ հայրենիքը այն միակ սրբազան վայրն է, որտեղ ամբարված են բոլոր ժամանակների հայ սերունդների աղոթքներն ու երազները, որտեղ շարունակ պիտի կերտվի հայոց ինքնությունը, և որի սրբազան հողից է հավետ ուժ առնե-

լու հայ ժողովուրդը: Հոգածու սիրով շրջապատենք Արցախից բռնի տեղահանված մեր քույրերին ու եղբայրներին, նրանց մեջ առատացնենք հույսը, որ երբեք չմարի հայրենի Արցախ վերադարձի տեսիլքը, և գործող մնա հավատն առ Աստված: Աջակից լինենք կարիքավորներին ու նեղյալներին և Բարձրալի օգնականությունը հայցենք անհայտ կորած և գերյալ մեր զավակներին ու նրանց ընտանիքներին:

Սուրբգրական պատգամի համաձայն՝ չմոռանանք բարեգործությունը և մեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՝ պատառազներն են հաճելի Աստծուն (հմմտ. Եբր. 13.16), և այս է ճանապարհը մեր ժողովրդի բարեպաշտ ու ապահով կյանքի, այս է ճանապարհը դարավոր ու նվիրական արժեքներով մեր ազգի և պետության լինելիության ու հարատևության:

Սրտագին աղոթենք, որ Երկնավոր Տերը խաղաղության մեջ պահի հայոց աշխարհը և ողջ մարդկությանը, Իր գորակցությամբ հույսի ու սիրո շնորհները և հաղթության պարզև սպիտակ վտանգների միջով անցնող մեր հայրենիքի ու համայն հայության կյանքին այսօր և միշտ և հավիտյան. ամեն:

Բարի, օրհնյալ Նոր տարի:

31 դեկտեմբերի, 2023 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով

Ցանուն Հօր և Որդու և Հոգու Սրբոյ. ամեն:

«Հիմա լույս եք ի Տեր. ընթացեք ինչպես լուսո որդիներ. քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը» (Եփ. 5:8—9):

Միտքի՛ հավատալով ժողովուրդ,

Այսօր՝ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին, ազգս հայոց, թեև վշտակիր և հոգեխռով, սակայն հավատքով աներեր, կամքով անկոտրում և հույսով առեցուն, խոնարհվում է մանկացյալ Փրկչի առջև, որ բերդեհեմյան այրից որպես լույս ու փրկություն ճառագեց ողջ աշխարհին: Գեղեցիկ օրհներգությամբ է հոգեպարար շարակալն մեզ փոխանցում Սուրբ Ծննդյան հիասքանչ իրողությունը. «Աստվածածին, լույսի խորան, արդարության Արեգակի արևելք եղար և խավարի մեջ նստածներին լույս ծագեցրիր»: Փրկչի Ծննդդ հրավեր է խավարից դեպի լույս, դեպի Աստված ընթանալու և միշտ Տիրոջ հետ լինելու՝ արժանի դառնալու երկնատուր բարիքների ու հավիտենության: Մարդկային Աստվածորդուն մերժելը, սակայն, արհավիրքներ է բերում,

չարիք ու ավեր սփռում: Սուրբ Ծննդդը պատգամ է առաջարկում ու հայցում, որ մարդկության կյանքը լցվի Քրիստոսով նորոգությամբ, և ազգեր ու պետություններ կարողանան գտնել խաղաղության ու համերաշխ համակցության ուղիները տազանայնությամբ ու հավատարմությամբ լեցուն ներկա աշխարհում:

Մեր ժողովուրդը 21-րդ դարում վերստին կրեց կորուստներ, ենթարկվեց նոր փորձությունների, որոնք, ցավոք, անկարող եղանք հաղթահարելու. աշխարհաքաղաքական բարդ իրադարձությունների, ինչպես նաև առաքելապատվեր բարության, արդարության ու ճշմարտության ճանապարհից խոտորվելու պատճառով: Բարությունը մեզանում աղճատվեց չարության ու նենգության որոններով, արդարությունն այլափոխվեց կողմնակալության ու հաշվեհարդարի դրսևորումներով, ճշմարտությունը խեղվեց ու խաթարվեց ստով ու չարահամար գործողություններով: Նման արատները նաև պատճառ դարձան մեր ազգի մասնատման, ուժերի ջլատման ու պարտությունների, նաև կորուստների մեր սրբությունների և արժանապատվության: Այսպես Արցախը միացանկ մնաց իրեն պատած արհավիրքների օրերին: Արցախից հայրդիր եղան հաղթական հայ-



րենի բնօրրանից, աստանդական և անօթևան: Բայց Տերը, որ Իր Ծննդյամբ փրկություն ու լույս բերեց խավարի մեջ, ցույց է տալիս, որ Աստծո հետ՝ ամեն նեղություն

վերափոխվում է հաղթության, ամեն տառապանք՝ աստվածային հատուցման, ամեն դժվարություն՝ ուժի և գործության, և անգամ մահը՝ հավիտենության: Այս գիտակցությամբ ու հանձնառությամբ մեկտեղենք մեր ջանքերը փորձությունները հաղթահարելու համար և ավետարանի խոսքերի ճշմարտությունը ցուցնենք մեր կյանքում. «Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց» (Հովհ. 1:5):

Միտքի՛ բարեպաշտ զավակներ ի հայրենիս և ի սփյուռս, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին Հայրապետիս պատգամն է, որ մեր սրտերը չդարձնենք հուսահատության, տրտմության մուրջ ու ցուրտ անձավներ, այլ՝ Քրիստոսի ներկայությամբ լուսավորված մտքներ, որտեղ մանուկ Հիսուսին աստվածահան գործեր ընծայելու մղումն ու ձգտումն են թագավորում: Արդ, ապավինենք մարդկային Տիրոջ, ամուր մնանք հավատքի մեջ, ամենուր լինենք բարո, սիրո և ճշմարտի առաջամարտիկներ՝ հանուն արդար ու լուսավոր մեր կյանքի: Նախանձախնդիր լինենք հայրենի պետության հզորացմանը և համախառն միասին մեր ողջ ներուժով կասեցնելու համար Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներն ու ոտնձգությունները: ➔ Էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով

← էջ 1

Վերացնենք արհեստականորեն մեր մեջ ստեղծված անջրպետները, ապրենք միմյանց հանդեպ սիրով, որ երկնային օրհնությանը պայծառաճան հայրենական ու ազգային մեր անդատանները, ինչպես Ավետարանում է ասվում. «Խալսարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. և լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի և ստվերների մեջ» (Մատթ. 4:16):

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հուսաբեր խորհրդով քաջալեր՝ հայրապետական Մեր հորդորն ենք բերում Արցախից տեղահանված Մեր զավակներին: Սիրելիներ, դուք անօրինակ հերոսական և անընկճելի ոգով ամենայն արժանապատվությամբ և անտրտուն հաղթահարել և հաղթահարում եք ձեզ պատուհասած նեղությունները: Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը, որը մենք շարունակելու ենք փայտաշեն մեր սրտում ու հոգում՝ ամենայն ջանք ի գործ դնելով արցախահայության իրավունքների պաշտպանության համար: Մնացեք լի հույսով՝ Աստված ձեզ բարիքներ և օրհնություններ պիտի պարգևի ձեր կրած զրկանքների փոխարեն: Ձեր դժվարություններում դուք միայնակ չեք: Ձեզ հետ են ի հայրենիս և ի սփյուռու հավատավոր ձեր եղբայրներն ու քույրերը, որոնք պիտի շարունակեն բոլոր հնարավոր միջոցներով սատար ու օգնական լինել ձեզ: Միասին մենք դուրս պիտի գանք առկա ծանր իրավիճակից և կառուցենք խաղաղ, բարձր ու ապահով ապագան մեր ժողովրդի ու հայրենիքի: Հավատում ենք մեր նոր կյանքի արշալույսին, քանզի խալսար չի կարող արգելք լինել արևածագին: Առափնույթ լույսի հետ, Սուրբ Ներսես Ծնորհալի Հայրապետի հացի համաձայն, մեր հոգիներում պիտի պայծառանա Աստծո իմանալի լույսը, և ինչպես Տերն է ասում մարգարեի շուրթերով. «Արագ պիտի մոտենա Բմ արդարությունը, և Բմ փրկությունը պիտի ելնի ինչպես լույս» (Եսայի 51:5):

Այս հուսառատությամբ ու հավատով, սուրբծննդյան ավետիսով եղբայրական Մեր ողջուն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն

Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշայանին, քույր Եկեղեցիների հոգևոր Պետերին՝ հայցելով Փրկչի օրհնությունն ու գորակցությունը և գահակալության արևշատ ու արդյունավետ տարիներ: Հայրապետական Մեր սերն ու բարյաց մաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու հոգևոր դասին և համայն հավատավոր Մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան շնորհաբեր այս օրը Մեր աղոթքն ենք վերառաքում առ Փրկչի մեր Տեր: Ով մանկացյալ Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, մեր փրկության համար մարմնացար և աշխարհ եկար ու մարդկության հանդեպ անսահման սիրով երկնաշաք շնորհների լույսը ծագեցրի բոլոր Քեզ հավատացողների հոգիներում: Խաղաղություն ու բարություն պարգևի աշխարհին ու մեր հայրենիքին: Ազատի մեզ ամենայն չարիք ու չարիքից, միահարություն շնորհի պատեղազմի արհավիրքներից ու ծանր կորուստներ

րից խռովահոյգ ու վշտակիր մեր սրտերին: Ներիր և թողություն շնորհիր մեզ, որպեսզի մեղքերն ու անկումները չփակեն մեր առջև ճանապարհի մեր տեսիլքների իրագործման և ակունքների Քո անբավ բարիքների և անսպառ ողորմության: Սուրբ Աջիդ խնամքի ներքո պահպանիր հայրենիքի սահմանները հսկող մեր քաջարի զինվորներին: Ծուռափույթ վերադարձ պարգևիր պատանդ պահվող գերազա հայորդիներին, այլև անհայտ կորած մեր զավակներին: Երկնային երանական հանգստության և լուսեղեն օթևանների արժանացրու պատերազմում զոհված մեր հերոս նահատակներին: Թող համայն հայության մեջ, ինչպես սուրբծննդյան մատուցած, շողարձակի Քո լուսավոր ներկայությունը, որպեսզի Քեզանով գորացյալ դիմակայենք բոլոր փորձություններին և ընթանալով դեպի հաղթական զավթի մեր ժողովրդի՝ փառափրկելով Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

Հայրապետական Սուրբ Պատարագ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով



Նույնվարի 6-ին մեր Տեր Փրկչի Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Հայրապետական խաչվառագարը թափորը, «խորհուրդ խորին» շարականի հանդիսավոր երգեցողության ներքո, Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սուրբ Տրդատի մատուցեց առաջնորդեց դեպի Սուրբ Խորան:

Սուրբ Պատարագին որպես առջնորդական սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Սուշեղ եպս. Բաբայանն ու ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի դեկան և Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանը:

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» իրեշտակաբարբառ ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը և տոնի առիթով հղեց իր պատգամը:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով և սրբալույս մյուռնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն է ծագումով շուշեցի, մոսկվայաբնակ բժիշկ, ակադեմիկոս Արամայիս Քամալովը:

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան փրկարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի ճրագալույցի Պատարագը Սուրբ Գայանե վանքում

Նույնվարի 5-ին մեր Տեր և Փրկչի Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով, հանդիսատեսությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանե վանքում մատուցվեց ճրագալույցի Սուրբ Պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները, Արցախի միաբան տիար Սամվել Շահրամանյանը, ԱՅ-ի պետական այրեր և ուխտավոր հայորդիներ:

Պատարագին էր Արցախի թեմի առաջնորդ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգևոր մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Վրթանես եպս. Արախանյանը:

Նախ կատարվեց Երեկոյան ժամերգություն, այնուհետև ընթերցվեցին սուրբգրային հատվածներ, որից հետո Մայր Աթոռի միաբան սարկավագներից չորսն ընթերցեցին Գանիելի մարգարեությունը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում Վրթանես սրբազանն իր քարոզում անդրադարձավ Քրիստոսի Սուրբ Ծննդյան խորհրդին՝ ի մասնավոր ընդգծելով. «Հիսուս Քրիստոսի իրաշարժ ծնունդը ոչ այլ ինչ էր, եթե ոչ վերստին հռչակումն աստվածային եղիցի Լույս իրամանի: Աստված խոնարհվեց՝ վերականգնելու արարչության խա-

թարված ներդաշնակությունը և կանգնեցնելու մարդկության նորից դեպի քառս գնացող վայրը:

Հայ ժողովուրդն առաջիններից մեկն ընդառաջ գնաց աստվածային ճշմարիտ Լույսին, որովհետև իր ենթագիտակցական ոլորտում դեռևս կրում էր իշխողությունը և մշույլները մախաստեղծ լույսի: Ուստի Քրիստոսի բերած հոգևոր նորոգումը մենք անվանեցինք լուսավորություն, մեր ազգի առաքյալներին և պաշտոնական առաջին հայրապետին անվանեցինք լուսավորիչներ, իսկ մեզ էլ սկսեցինք համարել Լուստ որդիներ»:

Սրբազան հայրը հորդորեց հավատացյալներին հետադարձ հայացք գցել իրենց անցած տարիների վրա և փորձել լույս սփռել իրենց ներքին մտահոգությունների ու անորոշության խավարի վրա:

Իր քարոզում Վրթանես եպիսկոպոսն անդրադարձավ նաև Արցախի կորստին:

«Տասնամյակներ շարունակ իր անկախության համար մաքառող Արցախը պատմության մեջ առաջին անգամ ենթարկվեց ամբողջական հալածության: ➔ էջ 3



Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնի ճրագալույցի Պատարագը Սուրբ Գայանե վանքում

էջ 2

Ադրբեջանի կողմից հատուկ նպատակով իրագործված իննամյա շրջափակման և մարդասիրական ճգնաժամի հետևանքով հյուժված մեր ժողովուրդը հերոսական դիմադրություն ցույց տվեց մահ ռազմի դաշտում. ցավոք ուժերն անհավասար էին, իսկ Արցախը՝ մենակ», — մեզ պատարագի սրբազանը՝ ցավն ի սիրտ արձանագրելով, որ այս տարի տասնյակ հազարավոր արցախցի հայորդիներ առաջին անգամ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոները պիտի դիմավորեն իրենց փայփայած օջախներից հեռու:

Այս առնչությամբ Վրթանես սրբազանը պատգամեց հավատացյալներին սիրով ու ջերմությամբ պարուրել Արցախի քույրերին ու եղբայրներին, որ նրանք նորից սկսեն հա-



վատալ իրենց լուսավոր գալիքին, իսկ արցախցիներին հորդորեց լցվել աստվածային հույսով և լավատեսությամբ, ապրել ու արա-

րել Մայր Հայաստանում, որովհետև միայն այս ձևով կարող է արթուն մնալ և իրագործվել վերադարձի հույսը:

Արցախի հավատավոր ժողովրդի ամուլից սրբազան հայրն իր որդիական սերն ու անկեղծ երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ ի հեճուկս բազմաթիվ դժվարությունների, անմաքուր միջավայրում Արցախի և արցախահայությանը մշտապես աջակցելու համար:

Վերջում Վրթանես եպիսկոպոսը Սուրբ Ծննդյան լուսաբեր տոնի առիթով աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հայոց

երկրի և պետականության անասանության, նահատակ քաջորդիների հոգիների խաղաղության, անհայտ կորած և գերյալ հայորդիների շուտափույթ վերադարձի, ինչպես նաև այս պահին սահմանը հսկող հայ զինվորների համար:

Սուրբ Պատարագի ավարտին՝ նախատոնակի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Սուրբ Խորան և վառեց Հիսուս Քրիստոսին խորհրդանշող մոմը, որի կենսատու լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր Նորին Սրբությունը Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց տարվա առաջին տնօրինեքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի պաշտոնեականներին



Նոյեմբերի 4-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ամանորի

և Սուրբ Ծննդյան տոների առիթով համդիպում ունեցավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխար-

հական աշխատակիցների հետ: Համդիպման Ամենայն Հայոց Հայրապետը, Ամանորի և Ս. Ծննդյան տոների առիթով իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ներկաներին, գնահատանքով անդրադարձավ Մայր Աթոռի աշխատակիցների մվիրյալ ծառայությանը Եկեղեցու առաքելության արդյունավորման գործում:

Նորին Սրբությունը հորդորեց նույն ոգով և նախանձախնդրությամբ շարունակել իրականացնել իրենց պարտականություններն ու աշխատանքները՝ ի շինություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի: Համդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նոր տարվա անելիքներին ու ծրագրերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց ԱՄՆ-ի արևելյան ու Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմեր

Հունվարի 13-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց ԱՄՆ-ի արևելյան ու Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմեր:

Նորին Սրբությունը համդիպումներ ունեցավ թեմական կառույցների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելով Մայր Աթոռի կողմից իրականացվող ծրագրերը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոներ

«Ծնալ մոր արքայ ի Բեթղեհեմ քաղաքի, որդիք մարդկան, օրհնեցեք, զի վասն մեր մարմնացաւ...»
(Շարակնոց, Սուրբ Ծննդեան շարական):

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ծնունդն ու Աստվածհայտնությունը տոնում է հունվարի 6-ին: Այն Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից առաջինն է: Տաղավար տոներ անվանումը հատուկ է միայն մեր Եկեղեցուն, և այդ տոները Հիմ ուխտի Տաղավարահարաց տոնի օրինակով են այդպես կոչվել: Հիմ ուխտում այս տոնի օրերին երուսաղեմում էր հավաքվում ամբողջ Իսրայելը, և տոնակատարության ողջ ընթացքում, որը տևում էր մեկ շաբաթ, ժողովուրդը բնակվում էր ժամանակավոր թեթև շինվածքներում՝ տաղավարներում՝ ի հիշատակ նրանց՝ Եգիպտոսից դուրս գալուն, երբ երկար ժամանակ տաղավարներում էին ապրում՝ մինչև Ավետյաց երկիր մտնելը (տե՛ս Ղևտ. ԻԳ 41–43): Այս նմանությամբ էլ Հայ Եկեղեցուն մեկից ավելի օրեր տևող տոները կոչվեցին տաղավարահարաց տոներ, իսկ հետագայում կրճատվելով՝ ստացան տաղավար տոներ անվանումը:

Սուրբ Ծննդյան տոնը մշտն Ենք ութ օր: Հունվարի 6-ի նախորդ օրը՝ երեկոյան, մատուցվում է ճրագալույցի Սուրբ և Ամենաի Պատարագ:

«Ճրագալույց» բառը նշանակում է ճրագ, մոմ վառել: Ս. Ծննդյան և Ս. Զատիկի նախորդող օրերն ընդունված է ճրագալույց կոչել: Սա հնուց եկած սովորույթ է: Ճրագալույց ասելով՝ Կաթողիկ Եկեղեցուն հասկացել են երեկոյան ընթերցանություն, այսինքն՝ երեկոյան ժամերգություն, քանի որ հնում այն տեղի էր ունենում Եկեղեցուն երեկոյան ժամերին և, բնականաբար, ճրագների ներքո: Բայց հայ իրականության մեջ ընդունված է եղել «Ճրագալույցը» կամ «Ճրագալույթը» հասկանալ որպես Քրիստոսի Ծննդյան ու Հայտնության և Զատիկի նախատոնակ: Այնուհետև Հայաստանյայց Եկեղեցուն միայն Ս. Ծննդյան և Ս. Զատիկի ճրագալույցներին է Պատարագը երեկոյան մատուցվում: Նախապատվելի է՝ այդ օրվա ընթրիքը պատրաստ-



Վարդգես Սուրենյանց, Տիրամայրը Մանկան հետ, 1891 թ.

ված լինի միայն ձկնեղենից, բանջարեղենից և ձվից: Ինչպես Ս. Գրիգոր Աստվածաբանն է ասում. «Այսօր նախօրեմ ու նախատոնակն է վաղվա մեծ լույսի ծագման, եւ ինչպես թագավորի գալստյան ավետիսը լսելով՝ նրան սիրողներն ուրախանում եւ պատրաստություն են տեսնում կամ ջախերով ընդառաջ գնում նրան, նույնպես էլ մենք այս երեկո նախապես Քրիստոսի Ծննդյան եւ Հայտնության ճրագալույցն ենք կատարում, քանի որ բոլոր տոներից ամենամեծն է»:

Իրապես Քրիստոսի ծնունդն աշխարհի համար մի մեծ և սքանչելի իրողություն է, որ տեղի ունեցավ երկու հազարամյակ առաջ: Փրկիչ մարդեղությամբ և հայտնությամբ մեզ

հնարավորություն ընձեռնեց հավելել կենաց Լույսին և խմելու հավիտենական կյանքի անսպառ աղբյուրի:

Աշխարհի Փրկիչը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, ծնվել է սուրբ և անարատ կույս Մարիամից Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում Հռոմի գոստինոս կայսրի և Աբգար թագավորի օրոք: Հիմ ուխտի մարգարեները Փրկիչ ծնունդից մի քանի հարյուրամյակ առաջ հստակորեն կանխատեսել էին «փառաց թագավորի» Ծննդյան ժամանակը և տեղը: Այդ մարգարեությունների համաձայն՝ Հիսուս Քրիստոս պետք է ծնվեր Դավիթ թագավորի հայրենի հրեական Բեթղեհեմ քաղաքում՝ մինչև մյուս ճյուղից սերող Մարիամից:

Հիմ Կտակարանում տեղ գտած պատմությունները նախապատրաստություն են՝ Քրիստոսին հասկանալու և ընդունելու համար: Այն խորհրդավոր օրե-

րին, երբ արդեն մոտենում էր Հիսուսի՝ երկիր մուտք գործելու ժամանակը, Հռոմի Օգոստինոս կայսրը հրամայեց երկրով մեկ համազգային մարդահամար կատարել, ըստ որի՝ յուրաքանչյուր հռոմեական հպատակ պարտավոր էր գրանցվել իր հայրենի քաղաքում: Ուստի Մարիամը և Հովվեփղ, իրենց բնակյալ Գալիլեա նահանգի Նազարեթ քաղաքը թողնելով, ծանապարհվեցին դեպի Դավթի Բեթղեհեմ քաղաքը: Այդ փոքրիկ քաղաքում մարդահամարի պատճառով հյուրանոցում ոչ մի ազատ անկյուն չգտնվեց, և Հովվեփղն ու Մարիամը ստիպված գիշերեցին քաղաքից դուրս՝ այն քարայրում, որ անձրևային ու ցուրտ եղանակներին որպես նախարան էր

ծառայում: Այստեղ՝ քարայրում՝ ծղոտի վրա, ծնեալին ցուրտ գիշերը Կույսը ծնեց Աստվածորդուն՝ աշխարհի Փրկիչին: Այսպես, ոչ թե երկրային փառքի, ինչպես ակնկալում էին հրեաները, այլ թշվառության ու պարզության մեջ ծնվեց Աստծուց խոստացված Մեսիան՝ Հիսուս Քրիստոս: Այդ մեծագույն իրադարձության մասին առաջինն իմացան հովիվները, որ քարայրից ոչ շատ հեռու հսկում էին իրենց նախիրը:

Քրիստոսի ծնունդն ազդարարվել էր նաև Արևելքի մոզորին՝ Բեթղեհեմի երկնքում հայտնված հրաշալի աստղի միջոցով: Նրանք «Երբ այն տունը մտան, տեսան մանկանը իր մոր՝ Մարիամի հետ միասին եւ ընկան ու երկրպագեցին նրան եւ բանալով իրենց գանձատուփերը՝ նվերներ մատուցեցին» ոսկի, կնդրուկ եւ զմուռ» (Մատթ. 2:11) Ոսկին խորհրդաբար տրվեց Հիսուսին՝ որպես Թագավորի: Կնդրուկը, որ օգտագործվում էր կրոնական ու ծիսական պաշտամունքներին, որպես Աստծո տրվեց: Զմուռը թանկարժեք և բուրուճնավետ յուղ էր և մարմինը փտումից պահպանելու հատկություն ուներ: Այդ անուշաբույր յուղն իր մեջ այն խորհուրդն էր կրում, որ Քրիստոս՝ որպես մարդ, մահվան կենթարկվի:

Հայաստանյայց Եկեղեցին մինչ օրս պահպանել է հին սովորույթը և Հիսուսի Ծննդյան ու Մկրտության տոնը կատարում է միևնույն օրը՝ հունվարի 6-ին: Ինչպես վկայում են Հայ Եկեղեցու հայրերը և մյուս ազգերի ժամանակագիրները, Աստվածհայտնության տոնը բոլոր քրիստոնյաները կատարում էին միասնաբար՝ հունվարի 6-ին, բայց հետո Հռոմի Կաթողիկ Եկեղեցու որոշումով՝ Հիսուսի Ծնունդն սկսեցին տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին: Ս. Ծննդյան Պատարագից անմիջապես հետո սկսվում է Զրօրիմեքի արարողությունը, որը խորհրդանշում է Քրիստոսի մկրտությունը: Հիսուս Իր օրինակով լուսավորեց այն Մկրտության խորհուրդը, որով մարդը պետք է մուտք գործեր քրիստոնեական Եկեղեցի: Զրօրիմեքի սովորույթը նախկինում ընդունված էր միայն երուսաղեմի Եկեղեցուն, բայց հետագայում տարածվեց քրիստոնեական մյուս Եկեղեցիներում ևս: ➔ էջ 8

